ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն՝
Հասցե՝ Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
Հեռ՝ (+37410) 517528; **Էլ. հասցե՝** hartak@sdaoffice.am

ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի 5–րդ աշխատաժողովի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի սեպտեմբերի 17–ին, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնի «Մանթաշով» հանդիպումների սրահում տեղի ունեցավ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի (այսուհետ՝ Հարթակ) 5–րդ աշխատաժողովը, որը նվիրված էր Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից աջակցվող «Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» ծրագրի շրջանակներում ընթացող *ՀՀ բնական կեր հանդակների (արոտավայրերի և խոտհարքների) տեղեկատուական համակարգի մշակման իրագործելիութեան և հնարաւոր կառուցուածքի* ուսումնասիրության արդյունքների քննարկմանը:

Աշխատաժողովի օրակարգը՝

Ժամ	*Թեմա*
09:00 – 09:30	Ժամանում, գրանցում, սուրճ
	Ողջույնի խոսք և ծրագրի ներկայացում
09:30– 09:45	*ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն* *ԳՄՀԸ*
09:45– 10:45	- **Ծրագրի շրջանակի նկարագրություն:** - **Համակարգի օգտագործողների առանցքային խնդիրների և գործառույթների, պահանջների, տեղեկատվական համակարգի (ՏՀ)**

Ժամ	*Թեմա*
	բովանդակության և ծրագրային ապահովումների ընդհանուր նկարագրություն: - **Համակարգի մշակման, գործարկման և շահագործման ուղղությամբ տարվող աշխատանքների հնարավոր ուղղություններ:** *Ներկայացնող՝ Ա. Ասրյան*
10:45 – 11:00	Սուրճի ընդմիջում
11:00 – 11:45	**Տեղեկատվական համակարգի նախատիպի ցուցադրում** *Ներկայացնող՝ Ա. Ասրյան*
11:45 – 12:30	Հարց ու պատասխան, քննարկում: Խմբային աշխատանքների համար մարտահրավերների սահմանում:
12:30 – 13:30	Ճաշի ընդմիջում
13:30 – 14:30	**Խմբային աշխատանք** Տրամադրված տվյալների և գործիքների հիման վրա արդյունքների ստացում
14:30 – 15:00	**Խմբային աշխատանքի արդյունքների ներկայացում, քննարկում, առաջարկներ**
15:00 – 16:00	**Հանդիպման արդյունքների ամփոփում, հետագա քայլեր, փակում** *Ա. Ասրյան* *ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն* *ԳՄՀԸ*

Հանդիպման մասնակիցները՝

1. Տիգրան Գաբրիելյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
2. Արման Խոջոյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
3. Քրիստինա Խանոյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
4. Հովհաննես Աբաջյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
5. Անուշ Վերանյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
6. Սիլվա Հակոբյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
7. Շավարշ Ալեքսանյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
8. Եկատերինա Խաչատրյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

9. Հռիփսիմե Բաբայան – ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
10. Գարեգին Մանուկյան – ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
11. Ոսկեհատ Գրիգորյան – ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
12. Արմինե Մկրտչյան – ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
13. Մարիամ Մարգանյան – ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
14. Անի Մխիթարյան – ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
15. Հովիկ Սայադյան – Միավորված Ազգերի Զարգացման Ծրագիր
16. Հրաչյա Զաքոյան – ՀՀ Ազգային Ագրարային համալսարան
17. Հայկ Երիցյան – ՀՀ Կադաստրի Կոմիտե
18. Աիդա Իսկոյան – ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետ, էկոլոգիական իրավունքի կենտրոն
19. Արմեն Խաչատրյան – Սիսիանի համայնքապետարան
20. Ռուբեն Մանուչարյան – Սիսիանի համայնքապետարան
21. Անդրանիկ Հարությունյան – Սիսիանի համայնքապետարան
22. Աղավնի Հարությունյան – Հայաստանի Ամերիկյան Համալսարան
23. Միշել Կրիստեն – Հայաստանի Ամերիկյան Համալսարան
24. Լուսինե Թումանյան – ՀՀ Վիճակագրական Կոմիտե
25. Կարեն Թորոսյան – Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ
26. Կարինա Հարությունյան – Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ
27. Վարդան Համբարձումյան – Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ
28. Գագիկ Թովմասյան – Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ, ՀԱԱՀ
29. Վիկտորյա Այվազյան – Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ
30. Աստղիկ Դանիելյան – Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
31. Արմեն Ասրյան – Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն

32. Մուշեղ Մկրտչյան – Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
33. Քարոլին Վագներ – Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
34. Սամվել Հովհաննիսյան – Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
35. Գայանե Նալբանդյան – Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
36. Երանուհի Հակոբյան – «Ընվայզ» խորհրդատվական
37. Լիլիթ Ղարայան – «Ընվայզ» խորհրդատվական

Աշխատաժողովին մասնակցեցին ՀՀ Էկոնոմիկայի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, Շրջակա միջավայրի և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների, ՀՀ Կադաստրի և Վիճակագրական կոմիտեների, պետական ոլորտում գործող, միջազգային, հասարակական և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ:

Հինգերորդ աշխատաժողովի ընթացքում՝

- Ներկայացվեց ու քննարկվեց ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների տեղեկատվական համակարգի մշակման իրագործելիության և հնարավոր կառուցվածքի ուսումնասիրությունը
- Ներկայացվեց և դեմո տարբերակով փորձարկվեց տեղեկատվական համակարգի առաջարկվող մոդելը

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանը, ով կարևորեց տեղեկատվական համակարգի ստեղծման նախաձեռնությունը՝ նշելով որ այն ոլորտի համար ունի կենսական նշանակություն:

Հաջորդիվ՝ մասնակիցներին ողջունեց ԳՄՀԸ ներկայացուցիչ Ա. Դանիելյանը՝ ներկայացնելով հանդիպման օրակարգը և աշխատաժողովի նպատակը:

Աշխատաժողովի բացման արարողակարգային մասից հետո խոսքը փոխանցվեց փորձագետ Ա. Ասրյանին, ով ներկայացրեց իրականացված ուսումնասիրության հիմնական բացահայտումները, ինչպես նաև տեղեկատվական համակարգի դեմո տարբերակը։



Ներկայացումից հետո տեղի ունեցավ հարց ու պատասխան, որի ընթացքում մասնակիցները բարձրաձայնեցին իրենց նկատառումները, համակարգի ֆունկցիոնալության հետ կապված իրենց ցանկությունները և տվյալների հավաստի և ժամանակին լինելու հետ կապված մտահոգությունները։

Քննարկումից հետո մասնակիցներին առաջարկվեց մասնակցել խմբային աշխատանքին և գործնականում կիրառելով առաջարկվող համակարգի դեմո տարբերակը՝ փորձել ստանալ այս կամ այն տեղեկատվությունը։ Խմբային

աշխատանքի ավարտին մասնակիցները ներկայացրեցին դեմո տարբերակի՝ արդեն իսկ գործնական կիրառման ընթացքում իրենց տպավորությունները, առաջ եկած խնդիրները, բացթողումները և ամփոփվեցին խմբային աշխատանքի արդյունքները:

Հանդիպման արդյունքում արոտների կայուն կառավարման գործընթացի շահագրգիռ կողմերը համաձայնության եկան ի գիտություն ընդունել և հանդիպման ընթացքում վերհանված առաջարկությունները և ձեռք բերված համաձայնությունները:

Առաջարկություններ և հանձնարարականներ, եզրակացություններ.

- Հաստատվեց, որ նման տեղեկատվական համակարգի (բազայի) անհրաժեշտությունը միանշանակ է տվյալ ոլորտի արդյունավետ կառավարման և հիմնավոր որոշումների կայացման համար:
- Շեշտադրվեց, որ բնական կերհանդակների տեղեկատվական համակարգի մշակման աշխատանքները անհրաժեշտ է սկսել տեղեկատվական բազայի ստեղծման փուլից, ինչը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում այս համակարգը ամրացնել ցանկացած այլ համակարգի՝ հաշվի առնելով ներկայումս տարբեր տեղեկատվական համակարգերի ստեղծման աշխատանքները՝ օրինակ ինտեգրված կադաստր և այլն: Նշվեց, որ IBiS ծրագրի շրջանակում մշակվել է Կենսաբազմազանության տեղեկատվական համակարգի համար հայեցակարգ և ճանապարհային քարտեզ և տվյալ համակարգը ստեղծվելու դեպքում կարող է փոխլրացնել բնական կերհանդակների

տեղեկատվական համակարգին: Բացի այդ՝ վերջերս համաձայնագիր է ստորագրվել ՄԱԿ-ի ՊԳԿ-ի Global Soil Partnerhisp-ի հետ, ինչի արդյունքում ստեղծվելու է Հայաստանի հողերի տեղեկատվական համակարգ:

- Համակարգի մշակման աշխատանքների ընթացքում կարևորվեց համագործակցությունը Կադաստրի կոմիտեի հետ՝ Ինտեգրված կադաստրի հայեցակարգի իրականացման շրջանակում:
- Շեշտադրվեց՝ տվյալ համակարգի ստեղծման դեպքում միջոլորտային համագործակցության և համապատասխան շահագրգիռ կողմերի՝ իրենց համակարգման ոլորտի տեսանկյունից շարունակական ներգրավման կարևորությունը:
- Համակարգում զետեղված տվյալների թարմացման հաճախականությունը պետք է կախված լինի դրանց տեսակից: Յուրաքանչյուր տվյալի թարմացման չափանիշները կորոշվեն պիլոտի ընթացքում:
- Համակարգի մշակման դեպքում պետք է առաջնային ուշադրություն դարձնել արոտավայրերի արտադրողականության վերաբերյալ տեղեկատվության առկայությունը, քանի որ սա հիմք է հանդիսանում արոտավայրի թույլատրելի բեռնավորման համար: Բացի այդ կարևոր են ներառել տվյալների վերջին թարմացման վերաբերյալ տեղեկատվություն: Ցանկալի կլինի ունենալ արոտավայրում օդի ջերմաստիճանի և արևափայլի տևողության վերաբերյալ տեղեկատվություն պարունակող շերտեր:
- Ընդգծվեց, որ հողապահպանման և հակաէռոզիոն միջոցառումները համապետական նշանակություն ունենան և այս տեսանկյունից կարևոր է համակարգում ներառել տեղեկատվություն թե բարելավման ինչ հնարավորություններ կամ կարիք կա տվյալ արոտավայրում:
- Անհրաժեշտ է համակարգը ստեղծելիս ապահովել գոյություն ունեցող բոլոր համակարգերի ինտեգրում և փոխգործելիություն, որպեսզի տվյալ մուտքագրողը

տեղեկատվությունը 1 անգամ և 1 տեղ մուտքագրի: Բացի այդ առաջնային է տվյալների հավաքագրման համար պրոտոկոլային հիմքերի (ստանդարտների) ստեղծումը, որպեսզի տվյալները միատեսակ կերպով հավաքագրվեն:

- Կադաստրի պետական կոմիտեի ունեցած տվյալներում առկա են անճշտություններ, թե տարբեր համայնքներում առկա հողային ֆոնդի, թե հողերի գործառնական նշանակության վերաբերյալ: Բացի այդ կան անհամապատասխանություններ հողերի տարբեր կարգերի համար սահմանված կադաստրային արժեքների և դրանց իրական որակի և վիճակի համադրության հետ կապված:
- Նշվեց, որ նպատակ է դրվելու նվազագույն բեռ ավելացնել տվյալների ստացման և մուտքագրման պատասխանատուների վրա, ինչը հնարավոր կլինի արբանյակային տվյալների մշակման և վերլուծության ավտոմատացման գործիքների կիրառման արդյունքում:
- Առաջարկվեց, որպես առաջին քայլ իրականացնել պիլոտ ամենաանհրաժեշտ շերտերը ստեղծելու հետ կապված, օրինակ ՀՀ արոտավայրերի և խոտհարքների ճշգրիտ քարտեզ, արոտավայրերի և խոտհարքների որակական շերտ և այլն:

Աշխատաժողովի ավարտին ամփոփիչ խոսքով հանդես եկան Ա. Ասրյանը, Վ. Համբարձումյանը և Ա. Դանիելյանը: Նշվեց, որ հաշվի առնելով աշխատաժողովի արդյունքները, ուսումնասիրությունը կլրամշակվի, կկազմվի աշխատանքային քարտեզ և վերջնական տարբերակը կշրջանառվի ներկաների և շահագրգիռ կառույցների շրջանում:

Համակարգման հարթակի հինգերորդ աշխատաժողովի վերաբերյալ անդրադարձ է հրապարակվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական էջում՝ https://mineconomy.am/news/1830 և Արմենպրես լրատվական կայքում՝ https://armenpress.am/arm/news/988371.html: